

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի 07.03.2017թ.նիստի

Հոգաբարձուների խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին հոգաբարձուների խորհրդի 24 (քսանչորս) անդամից 21-ը
(քսանմեկը):

Նիստին մասնակցում էին՝

- | | |
|-------------------|--|
| Ֆ. Յուլյան` | «ՇՊՀ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ,
ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության պետ, |
| Կ. Պետրոսյան` | «ՇՊՀ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար,
«ՇՊՀ» հիմնադրամի կենսաբանության, բնապահպանության
և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, |
| Ա. Սահակյան` | ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, |
| Ա. Նազարյան` | ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, |
| Ա. Ենգոյան` | ՀՀ կառավարության աշխատակազմի ՀՀ Ազգային ժողովի
հետ կապերի վարչության պետ, |
| Գ. Ղուկասյան` | ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության,
մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ,
«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի դեղատոների ցանցի տնօրեն, |
| Ս. Շիլաջյան` | ՀՀ ԿԳՆ «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ-ի տնօրեն, |
| Մ. Մովսիսյան` | «ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց
դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, |
| Ե. Սերոբյան` | «ՇՊՀ» հիմնադրամի բարձրագույն մաթեմատիկայի և
մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի
դոցենտ, |
| Ն. Հարությունյան` | «ՇՊՀ» հիմնադրամի մանկավարժության և սոցիալական
աշխատանքի ամբիոնի պրոֆեսոր, |
| Ա. Մկոյան` | «ՇՊՀ» հիմնադրամի հայոց լեզվի և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, |
| Հ. Մելքոնյան` | «ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց
դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, |
| Վ. Մանուկյան` | «ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց
դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, |

Է. Մաթևոսյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ,
Գ. Աղանյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ,
Ա. Մինասյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի սերվիս մասնագիտության II կուրսի ուսանող,
Մ. Գևորգյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության II կուրսի ուսանող,
Մ. Հովհաննիսյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի կառավարում մասնագիտության III կուրսի ուսանող,
Ա. Սարգսյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն մասնագիտության II կուրսի ուսանող,
Ռ. Սարգսյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի իրավագիտություն մասնագիտության III կուրսի ուսանող,
Լ. Կարապետյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի կրթության կազմակերպում մասնագիտության մագիստրատուրայի I կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի տնօրենի (ռեկտորի) ընտրություն.

- ա) Հավակնորդի՝ «ՇՊՀ» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում:
- բ) Հավակնորդի «ՇՊՀ» հիմնադրամի զարգացման ծրագրի ներկայացում:
- գ) Հարցերի ներկայացում հավակնորդին և հոգաբարձուների խորհրդի անդամների ելույթներ:
- դ) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
- ե) Ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն:
- զ) Ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

Ֆ. Յուլակյանը, բացելով հոգաբարձուների խորհրդի նիստը և ղեկավարվելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի 4.2 և 4.3 կետերով, հայտարարեց խորհրդի ներկա

համակազմով քվորումի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՅԵՑԻՆ`

21 անդամ. կողմ` 21, դեմ` 0, ձեռնպահ` 0:

1. ԼՍԵՑԻՆ`

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի տնօրենի (ռեկտորի) ընտրություն:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանը խոսքը փոխանցեց հոգաբարձուների խորհրդի քարտուղար Կ. Պետրոսյանին: Կ. Պետրոսյանը նշեց, որ 2017թ. փետրվարի 4-ին «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար 27.02.2017թ. հայտ է ներկայացրել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի տնօրենի (ռեկտորի) ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու Սահակ Գարուշի Մինասյանը: Հավակնորդի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի համապատասխան պահանջներին:

Կ. Պետրոսյանը հավելեց, որ հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի պատճենները 01.03.2017թ. ուղարկվել են հոգաբարձուների խորհրդի անդամներին, և ինքը պատրաստ է պատասխանել առաջացած հարցերին:

Քանի որ ներկաների կողմից հարցեր չեն չեցին, խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանը ռեկտորի թեկնածու Սահակ Գարուշի Մինասյանի` մրցույթին մասնակցելու հարցը դրեց քվեարկության:

Հոգաբարձուների խորհուրդը միաձայն որոշեց, որ հավակնորդ Սահակ Գարուշի Մինասյանը համապատասխանում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի պահանջներին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանը «ՇՊՀ» հիմնադրամի զարգացման ծրագրի ներկայացման համար խոսքը փոխանցեց «Շիրակի

Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի տնօրենի (ռեկտորի) թափուր պաշտոնի հավակնորդ Սահակ Գարուշի Մինասյանին:

Ս. Մինասյանը ներկայացրեց առաջիկա 5 տարիների համար «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի զարգացման հայեցակարգի ելակետային դրույթները՝ առաջնահերթ կարևորելով բուհի ներքին շահակիցների ներուժի զարգացումը, ինչպես նաև նյութատեխնիկական բազայի հարստացումը: Նրա համոզմամբ՝ արդյունավետ կառավարման շնորհիվ բուհը կվերածվի ժամանակակից գիտակրթական հաստատության, որը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում Շիրակի մարզի առաջնակարգությանը գիտահետազոտական և տեխնոլոգիական ոլորտում:

Զեկույցի ավարտին հավակնորդին հարցեր չներկայացվեցին:

Հոգաբարձուների խորհրդի անդամներից էլույթ ունենալու ցանկություն հայտնեցին ՇՊՀ մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի պրոֆեսոր Ա. Մկոյանն ու հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Հ. Մելքոնյանը: Նրանք բարձր գնահատեցին հավակնորդի կառավարչական փորձն ու հմտությունները կրթության ոլորտում, մասնավորապես «ՇՊՀ» հիմնադրամում:

Համեմատաբար կարճ ժամանակահատվածում բուհի ձեռքբերումներից հիշատակվեցին.

1. Կազմակերպաիրավական կարգավիճակի փոփոխությունը, որը կազմակերպության զարգացման ծրագրի հիմնադրույթները ներկայացնելու և իրականացնելու առումով աջակցող հանգամանք է:
2. Աշխատողների սոցիալական աջակցության, բուհի նյութատեխնիկական բազայի ընդլայնման նոր հնարավորությունների ներգրավումը:
3. Ուսանողակենտրոն և դասախոսակենտրոն համակարգերի արդյունավետ համագործակցությունը, որը կարևոր է հատկապես մասնակցային կառավարման շրջանակների ընդլայնման տեսանկյունից:

Ա. Մկոյանն ու Հ. Մելքոնյանն առաջարկեցին Ս. Մինասյանի թեկնածությունը թողնել փակ գաղտնի քվեարկությանը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանը հրապարակեց հավակնորդի ազգանուն-անունը: Հաշվի առնելով, որ անունը հրապարակելու պահին թեկնածու Ս. Մինասյանն ինքնաբացարկ չհայտնեց, նրա թեկնածությունը ներառվեց քվեաթերթիկում:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանը գաղտնի քվեարկության կարգը ներկայացնելուց հետո առաջարկեց ձևավորել 3 անդամից կազմված հաշվիչ հանձնաժողով:

Հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից առաջարկվեցին և ընտրվեցին հետևյալ թեկնածությունները՝

1. Սերոբյան Երվանդ (21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)
2. Հարությունյան Նաշիկ (21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)
3. Մաթևոսյան Էվելինա (21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)

Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից հանձնաժողովի նախագահ ընտրեց Ն. Հարությունյանին, իսկ քարտուղար՝ Է. Մաթևոսյանին: Հանձնաժողովի անդամները քվեաթերթիկների հետնամասում ստորագրելուց հետո կազմակերպեցին փակ գաղտնի քվեարկության գործընթացը: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովի կողմից կազմվեց «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի տնօրենի (ռեկտորի) ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը (2 օրինակից) և հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ն. Հարությունյանը հոգաբարձուների խորհրդի անդամներին հայտնեց քվեարկության արդյունքները. կողմ՝ 21, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ֆ. Յուլակյանն առաջարկեց հաստատել փակ գաղտնի քվեարկության վերոնշյալ արդյունքները:

ՔՎԵԱԴԿԵՑԻՆ՝

21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ղեկավարվելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 2-րդ ենթակետով, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.2 կետի 2-րդ ենթակետով և «Շիրակի

Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի 5.16, 5.17 և 5.26 կետերով, հիմք ընդունելով ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները (21 կողմ, 0 դեմ, 0 անվավեր)՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի տնօրեն (ռեկտոր) ընտրել Սահակ Գարուշի Մինասյանին, դադարեցնելով նրա լիազորությունները, որպես հիմնադրամի տնօրենի (ռեկտորի) ժամանակավոր պաշտոնակատարի:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

«ՇՊՀ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության պետ՝

Ֆ. Ցուլակյան

«ՇՊՀ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար, «ՇՊՀ» հիմնադրամի կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ՝

Կ. Պետրոսյան

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝

Ս. Ավետիսյան

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝

Ա. Սահակյան

ՀՀ Շիրակի մարզպետ՝

Հ. Միմոնյան

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝

Ա. Նազարյան

ՀՀ կառավարության աշխատակազմի ՀՀ

Ազգային ժողովի հետ կապերի վարչության պետ՝

Ա. Ենգոյան

ՀՀ կրթության և գիտության նախարարի
տեղակալ՝

Մ. Մկրտչյան

ՀՀ Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի կրթության, մշակույթի և
սպորտի վարչության կրթության բաժնի
պետ՝

Գ. Ղումաշյան

«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ-ի դեղատների ցանցի
տնօրեն՝

Ս. Շիլաջյան

ՀՀ ԿԳՆ «Գյումրու «Ֆոտոն» վարժարան»
ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Մ. Մովսիսյան

«ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկայի,
տեխնոլոգիայի և նրանց դասավանդման
մեթոդիկաների ամբիոնի դոցենտ՝

Ե. Սերոբյան

«ՇՊՀ» հիմնադրամի բարձրագույն
մաթեմատիկայի և մաթեմատիկայի
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի
դոցենտ՝

Ն. Հարությունյան

«ՇՊՀ» հիմնադրամի մանկավարժության և
սոցիալական աշխատանքի ամբիոնի
պրոֆեսոր՝

Ա. Մկոյան

«ՇՊՀ» հիմնադրամի հայոց լեզվի և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի
դոցենտ՝

Հ. Մելքոնյան

«ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկայի,
տեխնոլոգիայի և նրանց դասավանդման
մեթոդիկաների ամբիոնի դոցենտ՝

Վ. Մանուկյան

«ՇՊՀ» հիմնադրամի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ՝

Է. Մաթևոսյան

«ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ՝

Գ. Աղանյան

«ՇՊՀ» հիմնադրամի սերվիս մասնագիտության II կուրսի ուսանող՝

Ա. Մինասյան

«ՇՊՀ» հիմնադրամի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության II կուրսի ուսանող՝

Մ. Գևորգյան

«ՇՊՀ» հիմնադրամի կառավարում մասնագիտության III կուրսի ուսանող՝

Մ. Հովհաննիսյան

«ՇՊՀ» հիմնադրամի նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն մասնագիտության II կուրսի ուսանող՝

Ա. Սարգսյան

«ՇՊՀ» հիմնադրամի իրավագիտություն մասնագիտության III կուրսի ուսանող՝

Ռ. Սարգսյան

«ՇՊՀ» հիմնադրամի կրթության կազմակերպում մասնագիտության մագիստրատուրայի I կուրսի ուսանող՝

Լ. Կարապետյան